կոպոս չկարացեալ տանել այսմ, մատոյց գիր աղաչանաց առ Մէլիք Նասր Սուլթանն Եգիպտոսի · և նա գրեաց հրովարտակ (Խաթթի Շէրիֆ) առ դատաւորս և գործակալս Երուսաղէմի, պատուիրելով այսպէս · « Ուխտաւորքն Հայոց որք գան յԵրուսաղէմ · եթէ ոք 'ի նոցանէ մնասցէ անդուելի քան զամ մի, յամին երկրորդի տացեն զտարեկան հարկն, ըստ սովորութեան տրոցն ուխտաւորաց · և եթէ ոչ մնասցէ ոք, գաղարեսցի Սիւլէյման Իպն Աշրաֆ, եւ արք նորա 'ի հակառակութենէ, սակս հարկաց և այլ իրաց ։ Եւ եթէ նոքա ըստ հրամանի թագաւորին հատուցանեն զհարկն, մի ոք բռնասցի 'ի վերայ նոցա, և մի ոք պահանջեսցէ ըստ կամաց իւրոց աւելի զիրս ինչ, որ չէ ինքեան հարկաւոր, և ոչ նոքա պարտաւոր, հաւատացէք սմա և ըստ այնմ գործեցէք, առանց թիւրելոյ զիմաստս և զվճիռս նորին, 'ի ١٦ Շապան ամսոյ՝ ٨٠٣ (1400) ։

Է և այլ հրովարտակ, զոր առեալ են վասն անդորրութեան ուխտաւորաց, եւ օտար ազգաց խաղաղութեամբ վարիլ ընդ միաբանս Հայոց, թերեւս 'ի տաճարին Սուրբ Յարութեան յաւուր Ճրագալուցի Պասեքին, որպէս ակնարկեն բանք հրովարտակին ։ Սակայն 'ի թերութենէ նորին չէր հնար իմանալ զանուն Սուլթանին ։ Ուր ասէ՝ եպիսկոպոսն Հայոց հանդերձ վարդապետովք իւրովք մատոյց գիր աղաչանաց յատեանն Եգիպտոսի, յորում խնդրէր չպահանջել այլազգեաց զտուրս 'ի դուռն Ս. Յարութեան յուխտաւորաց և յայլոց 'ի մտանելն 'ի ներքս ։ Եւ եկեղեցականք Վրաց, Հաբեշաց եւ Յունաց, յորժամ մտանեն 'ի Գերեզմանն Քրիստոսի վասն ուխտի, հաւաստութեամբ մտցեն, և ամենեքեան 'ի միասին կատարեսցեն զպաշտամունս իւրեանց · ըստ պատմագրութեան առաջին հրովարտակաց, զորս ունին իւրաքանչիւր ազգ 'ի ձեռս իւրեանց · 'ի ١٠ Ճէմազիլ էվվէլ ամսոյ՝ ٨١٤ (1411) ։

Պօղոս եպիսկոպոս յԱրարատայ, զկնի Սարգսի յաջորդեաց զԱթոռն Պատրիարքական ։ Սա գնեաց զպարտէզն ձիթենեաց 'ի ձորն Գեթսեմանի 'ի վերին կողմն գերեզմանի Սուրբ Աստուածածնի, որոյ մուրհակն պահի ցարդ առ մեզ՝ ٨١٦ (1413) · բայց յետ ժամանակաց այլազգիք վերստին տիրեալ են տեղւոյն, եւ ապա վերստին գնեալ